նութեան ժամանակին և խառնութեան այլազգեաց և քրիստոնէից՝ համբերութեամբ և բազմավաստակ ճգամբ շինեալ նորոգեաց զվանս Ս. Փրկչի և Հրեշտակապետի, և ամրացոյց զնոսա յամենայն կողմանց. բազմացոյց զսենեակս 'ի մէջս միաբանաց. բազմացոյց զկրօնաւորս կարգեալ 'ի վերայ նոցա հոգևոր տեսուչս, և սահմանեաց կրօնաւորական կարգօք կալ 'ի պաշտօն փառաբանութեան Աստուծոյ. օրհնել զԱստուած, զտուիչն ամենայն բարեաց, եւ զբովանդակ ազգն, որք ձեռնտու եղեն առատութեամբ յամենայն գործառնութիւնս նորին: Նորոգեաց նաեւ ըզվանս Ս. Յակոբայ, շինեալ 'ի նմա նորանոր սենեակս եւ օթեւանս 'ի մէջս ուխտաւորաց, և զարդարեաց զեկեղեցին ոսկեղէն և արծաթեղէն զարդուք. ծանրագին զգեստուք և սպասուք յօրինեալ պատուական ակամբք և մարգարտովք՝ և ձեռագիր մատենիւք: Ապա ձեռնարկ նորոգել զվանս Բեթղեհէմի՝ շինեաց զեկեղեցի յանուն Սուրբ Աստուածածնի, ընդարձակեաց զսենեակս 'ի մէջս ուխտաւորաց, եւ զխանն 'ի ներքոյ վանաց, եմոյծ զբերան ջրհորոյն 'ի ներքս բազում նեղութեամբ, ծախեալ յոլով ինչս 'ի դրունս այլազգեաց՝ և աւարտեաց զամենայն շինուածսն, յորս ինքն անձամբ աշխատէր ընդ մշակաց, կրելով զշաղախս և զքարինս: Սակայն 'ի վերայ այսր ամենայնի ոչ կարաց զերծանիլ 'ի դառնութեանց և 'ի զզուանացն Արաբացւոց. զի թէպէտ բազում անգամ բերեալ էր հրովարտակ յԱրքայէ, և գիր 'ի կուսակալէն Դամասկոսի՝ սակս շինուածոց, այլ դատաւորք և այլազգիք եղանէին 'ի քննութիւն և տային հրաման շինելոյ, և յետ աւուրց ինչ պէս պէս պատճառանօք խափանէին զգործն՝ և պահանջէին զգումարս դրամոց: Գրիգոր Պատրիարք չեւ եւս հանեալ զկամս այլազգեաց Երուսաղէմի, եղանէր առաջի նորա այլ իմն խոչ դժնդակ, զի կամ վայրագ Արաբացիք յառնէին 'ի վերայ նորա՝ և կամ Կուսակալք Դամասկոսի, և պահանջէին 'ի նմանէ բազում ինչ, թէպէտ նա ցուցանէր զհրամանս Արքային, այլ չէր ինչ փոյթ նոցա: Թողումք աստ զյայտնի և զգաղտնի թշնամութիւնս Յունաց և Լատինաց, զանվերջանալի վէճս և զդժտութիւնս նոցին՝ զորս ունիմք տակաւին պատմել: Այսպէս անտանելի նե-